ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ICARE
INTERNATIONAL CENTER FOR AGRIBUSINESS RESEARCH AND EDUCATION

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ 3
Ներածություն 4
1. Ոլորտի բնութագիրը և իրավիճակային վերլուծության արդյունքները 6
1.1. Գյուղատնտեսության վիճակը 6
1.2. Գյուղատնտեսության ծրագրերը և ռազմավարությունը 6
1.3. Ներդրումների շարժընթացը 8
1.4. Ինստիտուտները 11
1.5. Օրենսդրություն և միջազգային արբիտրաժ 12
1.6. Քաղաքական իրավիճակը, մակրոտնտեսական կայունությունը և կառուցվածքային հիմնախնդիրները 14
1.7. Աշխատաշուկա, կրթություն և նորարարություն 16
1.8. Տնտեսական ինտեգրում և ազատ առևտրի համաձայնագրեր 18
1.9. Կայունություն 19
1.10. Գործարար և ներդրումային միջավայր 21
1.11 Կապիտալի շուկաներ և պորտֆելային ներդրումներ 25
2. Առաջարկություններ 26
Օգտագործված գրականություն 33

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԶՀԳ	Զարգացման հայկական գործակալություն
ԿԲ	Կենտրոնական բանկ
ՀԶՀ	Հայաստանի զարգացման հիմնադրամ
ՕՈՒՆ	Օտարերկյա ուղղակի ներդրումներ
ԱՏԳ	Ազատ տնտեսական գոտի
ՀԲԴ	Հարվարդի բիզնես դպրոց
ԱԶՀ	Արդյունաբերության զարգացման հիմնադրամ
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ՏԶՆՆ	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
ՀԱՄՀ	Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԳԳԿԶՌ	Գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն
ՀԲ	Համաշխարհային բանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զարգացած երկրներում ավտոմատացման, մեքենայացման և հետբերքավաքի տեխնոլոգիաների շնորհիվ գյուղատնտեսությունը նշանակալի փոխակերպումների է ենթարկվել: Արդի անասնաբուծական տնտեսություններն ամբողջովին կառավարվում են մեքենաներով, մասնավորապես ավտոմատացված են կերակրման, կթի, փաթեթավորման, պիտակավորման և որակի վերահսկողության հետ կապված գործառնությունները: Թռչնաբուծարանները կիրառում են ստանդարտացված չափերի արտադրության, սպանդի, սառեցման և փաթեթավորման ավտոմատացված տեխնոլոգիաներ: Մրգատու այգիները և ջերմոցային տնտեսությունները նախկինում ինտենսիվ ձեռքի աշխատանք էին պահանջում, մինչդեռ ներկայումս մեքենաներ են օգտագործում պտուղ բանջարեղենը տնկելու, ջրելու, պարարտացնելու, բերքահավաքի, տեսակավորման համար: Այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ոչ միայն կրճատել մարդկային ռեսուրսների անհրաժեշտությունը, այլ նաև արդյունավետ և ռեսուրսախնայող են դարձնում գյուղատնտեսությունը (Ford, 2015): Իսրայելի նախկին վարչապետ Շիմոն Պերեսը Խաղաղության նոբելյան մրցանակ ստանալիս իր ելույթում նշում է. «Իսրայելը, որը հիմնականում անապատային երկիր էր, գյուղատնտեսության ոլորտում գիտական լուծումների ներդրման շնորհիվ, առանց ջրային ռեսուրսների կամ տարածքի ընդարձակման բարձր բերքատվություն է ապահովում» (Peres, 1999): Այս համատեքստում ՀՀ-ն ուրիշ այլընտրանք, քան գիտության և նորագույն տեխնոլոգիաների մեջ ներդրումների միջոցով գյուղատնտեսության զարգացումը, չունի:

Բացի վերոնշյալից, փոխկախվածության և շուկաների հետագա ազատականացման հետևանքով ոչ պատշաճ արձագանքը գլոբալ միտումներին կարող է զարգացման և աճի տեսանկյունից ճակատագրական լինել: Նշվածի լավագույն ապացույցն է Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) կառավարության կողմից որդեգրված քաղաքականությունը՝ խթանել գյուղատնտեսության զարգացումը, զուգորդելով այն ներմուծման փոխարինման ռազմավարության հետ, որը հռչակել է և որի իրականացմանը նպաստում է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը (Путин, 2015): Այս քաղաքականությունը երկարաժամկետ վտանգ կարող է առաջացնել Հայաստանի համար, քանի որ ՌԴ-ն ՀՀ-ից գյուղմթերքների արտահանման հիմնական շուկան է: Ավելին, ՌԴ և այլ երկրների կողմից գյուղատնտեսությունում հետագա ներդրումները կարող են ոչ միայն ազդել ՀՀ-ից արտահանման ծավալների վրա, այլ հետագայում կարող են սրել մրցակցությունը տեղական շուկայում:

Այնուհանդերձ, հաշվի առնելով բնակչության աճի հետևանքով գլոբալ պարենային անվտանգության վերաբերյալ մտահոգությունները, գյուղատնտեսությունը և սննդի արդյունաբերությունը մեծ հեռանկարներ ունեն: Գլոբալ դինամիկան և կանխատեսումները փաստում են, որ ապագայում մեծանալու է պահանջարկը ագրոպարենային ապրանքների նկատմամբ: Համաձայն Մաքքենզի ընկերության ուսումնասիրության, սննդարդյունաբերությունը և ագրոբիզնեսը կազմելու են 5 տրիլիոն դոլար ծավալով ոլորտ, ընդ որում աճի միտումը շարունակական է լինելու. մասնավորապես 2050թ. կալորիական պահանջարկը կավելանա 70 տոկոսով, իսկ մշակաբույսերի նկատմամբ պահանջարկը կավելանա առնվազն 100%-ով (Lutz Goedde, Maya Horii and Sunil Sanghvi, 2015): Մեկ այլ ուսումնասիրության արդյունքներով 2050թ. սննդի նկատմամբ պահանջարկը կարող է ավելանալ 59-98%-ով (Elferink, Schierhorn, 2016):

Հաշվի առնելով բոլոր վտանգները և սպառնալիքները, պարզ է, որ ՀՀ գյուղատնտեսությունը հարաճուն շուկաներից օգտվելու մեծ ներուժ ունի՝ ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման միջոցով: Նոր կառավարությունը պետք է ձգտի կենտրոնանալ ներդրումային միջավայրի բարելավման և խթանման, ներդրումներին աջակցող ինստիտուտների ուժեղացման և քաղաքականության բարեփոխումների վրա: Օտարերկրյա ներդրումները կարող են հանդիսանալ ոչ միայն կապիտալի ներգրավման առումով լավ միջոց, այլ նաև՝ գիտելիքի, փորձառության, տեխնոլոգիաների և նոր շուկաների: Բացի այդ, տեղի բնակչությունը կարող է օգտվել ոչ միայն նոր աշխատատեղերի առկայությունից, այլ նաև ապրանքների ավելի բազմազան տեսականուց, որակի բարձրացումից, անվտանգության և ավելի շահավետ գնագոյացումից:

Սույն փաստաթղթի տրամաբանությունը հիմնված է այն փաստի վրա, որ գյուղատնտեսության ոլորտում տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավումը դուրս է գալիս զուտ ոլորտի ռազմավարության սահմաններից և անհրաժեշտ հաշվի առնել նաև մի շարք այլ նկատառումներ: Ըստ այդմ, առաջին մասում կենտրոնացել ենք գյուղատնտեսության ոլորտում ներդրումների ներգրավման հիմնախնդիրների վրա, իսկ երկրորդ մասում՝ ոլորտում օտարերկրյա ներդրողների ներգրավելու վերաբերյալ առաջարկությունների:

1. ՈԼՈՐՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1.1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Վերջին հինգ տարիներին ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասնաբաժինը կազմում է շուրջ 20 տոկոս (WB, 2016)։ Այն բաղկացած է հիմնականում մեծաքանակ, մասնատված փոքր գյուղացիական տնտեսություններից։ ՀՀ-ում առկա են շուրջ 317000 գյուղացիական տնտեսություններ, և դրանցում մեծամասամբ առկա է աշխատանքի խիստ ցածր արտադրողականություն և նոր տեխնոլոգիաների կիրառման բացակայություն։ Հողակտորները փոքր են, միջինում 1,4 հեկտար (ԱՎԾ. 2014)։ Կրթական և գիտասփյուռ-խորհրդատվական համակարգը դերակատարում չունի գիտելիքի և տեխնոլոգիայի փոխանցման առումով, քանի որ այս ինստիտուտները չունեն բավարար կարողություններ։ ՀՀ գյուղացիական տնտեսություններում հիմնականում կիրառվում են մշակման ավանդական մեթոդներ։ Խոցելի մշակաբույսերից ավելի կայուն մշակաբույսերի անցումը դանդաղ է իրականացվում, ինչն իր հերթին դանդաղեցնում է ավտոմատացումը մի շարք ճյուղերում։ Տեխնոլոգիաների օգտագործման ցածր մակարդակը լրջագույն երկարաժամկետ ռիսկ է հանդիսանում։

1.2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսության ոլորտի պետական ֆինանսավորումը բավական քիչ է։ 2016թ. այն կազմել է 10,86 մլրդ դրամ (Պետական բյուջեի մասին ՀՀ օրենք. 2017)։ Պետական աջակցության մեխանիզմները նպատակաուղղվում են ոչ թե տեխնոլոգիաների փոխանցման վրա, այլ ներդրանքների, (ջուր, դիզելային վառելիք, պարարտանյութ, ցորենի սերմացու, վարկերի տոկոսադրույք) հետ կապված ծախսերի սուբսիդավորման, ինչպես նաև պարբերական գործառնությունների իրականացման վրա, մասնավորապես պատվաստումներ, հողի քիմիական անալիզ և համանման այլ ծառայությունների տրամադրում։ Նշյալ սուբսիդավորումները տրվում են հիմնականում փոքր տնտեսություններին. օրինակ՝ վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը թիրախավորում է փոքր արտադրողներին։ Վարկի առավելագույն չափը կազմում է 3 մլն դրամ, որը տրվում է 3 տարի ժամկետով։

Գյուղատնտեսության նախարարությունը մշակել է մի շարք ռազմավարական փաստաթղթեր, որոնք միտված են ոլորտի զարգացմանը։ Երկու հիմնական փաստաթղթերն են ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ կայուն զարգացման ռազմավարությունը և Պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը։ Գյուղատնտեսության նախարարությունը տեղեկացրել է, որ ներկայումս կառավարությունում շրջանառվում է նոր ռազմավարական փաստաթուղթ «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2016-2025թթ կայուն զարգացման ռազմավարություն» անվանումով։ Բացի այդ, կան մի շարք քաղաքականության կողմնորոշիչ փաստաթղթեր, որոնք նպատակաուղղված են կոնկրետ ոլորտների զարգացմանը։ Վերոհիշյալ փաստաթղթերի վերլուծությունը հանգեցրել է որոշ նկատառումների, որոնց հետ հարկ է հաշվի նստել. ա) գյուղատնտեսության նախարարությունը ներկայացնում է մեծաքանակ գերակայություններ, որոնց իրականացման համար, սակայն, ֆինանսավորումը բացակայում է.

բ) գործողությունների պլանում ներառված որոշ գործողություններ ամբողջովին չեն համապատասխանում հիմնախնդրի ձևակերպմանը. գ) բացակայում են ներդրումների ներգրավմանը թիրախավորված գործողությունները: Ռազմավարության առանցքային հիմնախնդիրն այն է, որ այն բացահայտում է, որ գյուղատնտեսության նախարարությունը չունի ոլորտի գերակայությունների մասին հստակ պատկերացում: Օրինակ, նոր քաղաքականության նախագծման փուլում այն կարող է կենտրոնանալ 5-7 գերակայությունների վրա և այդ գերակայություններին հապատասխան նախատեսի հատուկ գործողությունների և պետական աջակցության միջոցառումների պլան:

Բացի այդ, քաղաքականության կողմնորոշիչ փաստաթղթերը չունեն օտարերկրյա ներդրումների ներգրավման մեխանիզմներ: Միայն վերջերս միջազգային զարգացման կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում գյուղատնտեսության նախարարությունը մշակել է ագրոներդրումների ուղեցույց, ջերմոցային տնտեսության ոլորտային ներդրումների նախագիծ և ջրային տնտեսության համար ներդրումային թերթիկներ:

Ամփոփելով պետք է նշել, որ ռազմավարական հարթությունում գյուղատնտեսության նախարարությունը չունի որևի հիմնադրույթ կամ փաստաթուղթ օտարերկրյա ներդրումների ներգրավման խթանման համար: Չնայած նախարարությունը սովորաբար նշում է, որ ինքը պատրաստակամ է աջակցել ներդրողներին, բայց պետք է նշել, որ նախարարությունն այս հարցում չունի կառուցվածքային մոտեցում, քանի որ չկան ամրագրված աջակցության կոնկրետ մեխանիզմներ: Գյուղատնտեսության նախարարությունը չունի որևէ բաժին, որը կազմում է ներդրումների ներգրավման քաղաքականությունը, իսկ ներդրումների ներգրավման գործառույթը իրականացնում է Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը (ՏԶՆՆ): Նոր կառավարությունը էկոնոմիկայի նախարարությունը վերանվանել է ՏԶՆՆ-ի, որպեսզի ընդգծի ներդրումների կարևորությունը: Ավելին, ավելի քան երկու տարի առաջ կառավարությունը հիմնել է ներդրումների և արտահանման խթանման կառույց՝ Հայաստանի զարգացման հիմնադրամը (ՀԶՀ):

1.3. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ

2015թ. հունվար-դեկտեմբերին իրական հատվածում օտարերկրյա ներդրումների զուտ ներհոսքը կազմել է 247,7 մլն ԱՄՆ դոլար: Ներդրում իրականացրած հիմնական երկրներն են Արգենտինան (98,5 մլն ԱՄՆ դոլար), Շվեյցարիան (90,2 մլն ԱՄՆ դոլար), ՌԴ (66,9 մլն ԱՄՆ դոլար), Լյուքսեմբուրգը (59,5 մլն ԱՄՆ դոլար), Գերմանիան (56,2 մլն ԱՄՆ դոլար), ԱՄԷ-ն (25,4 մլն ԱՄՆ դոլար), և ԱՄՆ-ն (23,8 մլն ԱՄՆ դոլար):

Օտարերկրյա ներդրումները Հայաստանում 2006-2015 (հազ. ԱՄՆ դոլար)

	Ընդամենը	ՕՈւՆ
2006	444,120.00	250,727.00
2007	845,377.00	582,314.00
2008	1,257,643.00	1,000,911.00
2009	935,485.00	732,118.00
2010	702,661.00	482,999.00
2011	816,272.00	631,420.00
2012	751,804.00	567,409.00
2013	597,375.00	271,160.00
2014	402,582.00	281,790.00
2015	247,759.00	145,268.00

Աղբյուրը՝ ԱՎԾ, 2016



Ըստ ոլորտային բաշխվածության, ներդրումները հիմնականում ուղղվում են հանք-արդյունաբերություն (134,9 մլն ԱՄՆ դոլար), էներգետիկ համակարգ (106,8 մլն ԱՄՆ դոլար), տրանսպորտ և պահեստավորում (72,8 մլն ԱՄՆ դոլար), մեծածախ և մանրածախ առևտուր (33,7 մլն ԱՄՆ դոլար) և գյուղատնտեսություն, ներառյալ անտառային տնտեսությունը և ձկնաբուծությունը (26,2 մլն ԱՄՆ դոլար) (ՏՋՆՆ. 2016):

Ներդրումների շարժընթացը և չափերը պետք է մտահոգեն ՀՀ կառավարությանը, քանի որ այն հստակ արտահայտում է օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) նվազման միտում, որը իր նվազագույն մակարդակին է հասել 2015թ:

Օտարերկրյա ներդրումները Հայաստանում և Վրաստանում 2006-2015թթ. (մլն. ԱՄՆ դոլար)

	Վրաստան	Հայաստան
2006	1190	251
2007	2015	582
2008	1564	1001
2009	658	732
2010	814	483
2011	1117	631
2012	912	567
2013	942	271
2014	1758	282
2015	1564	145

Աղբյուրը՝ ԱՎԾ, 2016



Ոմանք կարող են առարկել, որ գլոբալ ֆինանսական ճգնաժամի պատճառով ներդրումները հիմնականում նվազում են ամբողջ աշխարհում, սակայն հաջորդ գծապատկերը ցույց է տալիս,

որ առնվազն հարևան Վրաստանի առումով նման պնդումները տեղին չեն:

Գծապատկերը ցույց է տալիս, որ Վրաստանի տնտեսության ներգրավված ՕՈՒՆ զգալիորեն մեծ են, իսկ գլոբալ ֆինանսական ճգնաժամից հետո դրանք անշեղորեն աճում են (GeoStat, 2016): Բացի այդ, հարկ է նշել, որ, օրինակ 2015թ տվյալներով Վրաստանում ՕՈՒՆ-ի հիմնական մասը (ավելի քան 50 տոկոս) ուղղվում են դեպի տրանսպորտի և շինարարության ոլորտներ, իսկ մոտ 9%-ը՝ գյուղատնտեսություն և արդյունաբերություն: Այլ խոսքերով ասած, ներդրումների շուրջ 50%-ն ուղղվում են ենթակառուցվածքների բարելավմանը, ինչը զարգացման կարևորագույն գործոններից է և ուղղակի ազդեցության գործոն է ներդրողի համար:

Վերջին հինգ տարիներին որոշ ներդրումներ են արվել գյուղատնտեսության ոլորտում, մասնավորապես արդիական ջերմոցների, կաթնամթերք արտադրող ընկերություններ, այգիների և ձկնաբուծության մեջ: Այս ներդրումները գլխավորապես կամ տեղական են կամ սփյուռքի կողմից իրականացված:

Օտարերկրյա ներդրումները Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում 2008-2015 (հազ. ԱՄՆ դոլար)

	Ընդամենը	ՕՈւՆ
2008	23,745.00	22,923.60
2009	7,893.70	6,700.00
2010	5,639.20	4,784.00
2011	3,742.90	2,835.20
2012	36,407.90	36,126.30
2013	8,371.00	7,171.00
2014	13,179.20	10,047.70
2015	26,181.20	26,163.80

Աղբյուրը՝ ԱՎԾ, 2016



Վերջերս ներդրումներ են կատարվել խաղողագործության և գինեգործության ոլորտում: Ներկայումս մի շարք նախագծեր մշակման փուլում են, մասնավորապես՝ ընկուզենիների արտադրության մեջ մեծամասշտաբ ներդրումների վերաբերյալ: Նշվածը դրական ազդակ է գյուղատնտեսության ոլորտի համար:

Չնայած ընդհանուր ներդրումները անկում են գրանցում ՕՈՒՆ-ը գյուղատնտեսության ոլորտում աճում են 2013թ-ից: Ոլորտը մեծ ներուժ ունի ՕՈՒՆ-ի ներգրավման առումով հետևաբար ներդրումների ներհոսքը կարելի է էականորեն ավելացնել:

Օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ հիմնադրված ընկերությունները

Երկրներ	Մասնաբաժինը (%)
Իրան	38.2
ՌԴ	21.8
ԱՄՆ	8.3
Հնդկաստան	3.2
Սիրիա	2.8
Ֆրանսիա	2.8
Լիբանան	2.7
Վրաստան	2.1
Այլ	18.1

Աղբյուրը՝ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր, 2016

Այնուհանդերձ ներկայումս ներդրումների ծավալը փոքր է և կառավարությունը պետք է իրականացնի բարեփոխումներ, որոնք կառաջացնեն ոլորտի հանդեպ ներդրողների հետաքրքրությունը: Ընդհանրապես, եթե մենք ուսումնասիրենք գյուղատնտեսության ոլորտի ներդրումների շարժընթացը անկախությունից հետո, այն պատմականորեն փոքր է եղել: Եթե ուսումնասիրենք սփյուռքի գործունեությունը ՀՀ-ում, ապա ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Լիբանանում, ՌԴ-ում ապրող էթնիկ հայերը հիմնականում նախընտրում են ավելի շատ իրականացնել զարգացման գծով աջակցություն, քան ներդրումներ անել բուն տնտեսության մեջ: Մենք հավատացած ենք, որ եթե կառավարությունը նվազեցնի անորոշությունները և շարունակաբար կատարելագործի ներդրումային միջավայրը, ապա գյուղատնտեսության ոլորտում ներդրումները կարող են զգալիորեն ավելանալ:

1.4. ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ

ՀՀ-ում ներդրումային քաղաքականության համար պատասխանատու առանցքային ինստիտուտը ՏՋՆՆ-է: Այս նախարարության ներքո 2015թ. Կառավարությունը, որպես երեք մարմինների (ՀՋԳ, ԱՋՀ և ԱՄՀ) միացման արդյունք, հիմնեց Հայաստանի զարգացման հիմնադրամը: Վերջերս ստեղծվեց մեկ այլ հիմնադրամ՝ «Հայաստանի իրավազորություն», որի նպատակն է մեծացնել Հայաստանի գրավչությունը օտարերկրյա ներդրողների համար: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ղեկավարվելու է ՀՀ նախագահի գլխավոր խորհրդականի կողմից (Արմենպրես, 2016): Ներկայումս ներդրողներին աջակցող միակ գործող կազմակերպությունը ՀՋՀ-է: ՀՋՀ-ն օտարերկրյա ներդրողներին տրամադրում է տեղեկատվական բնույթի ծառայություններ, օրինակ՝ գործարար կլիմայի, ներդրումային հնարավորությունների և համապատասխան օրենսդրության մասին, ներդրողի համար կազմակերպում է այցելություններ տեղերում իրավիճակին ծանոթանալու համար, կառավարում է այցելությունից հետո աջակցությունը, օժանդակում է ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացում և այլն: ՀՋՀ օտարերկրյա ներդրողներին ապահովում է Հայաստանի բիզնես միջավայրի, ներդրումային հնարավորությունների և համապատասխան օրենսդրության մասին տեղեկատվության տրամադրման, տեղերում այցելությունների կազմակերպման, հետայցերի աջակցության, ներդրումային ծրագրերի իրագործման, բիզնեսի վերաբերյալ ծանոթացումների, ինչպես նաև կառավարական գերատեսչությունների միջև համագործակցության հաստատմանն ուղղված խորքային ծառայություններ: Հիմնադրամը տրամադրում է նաև հետներդրումային աջակցության ծառայություններ արդեն Հայաստանում հաստատված ներդրողներին:

ՀՋՀ-ի կողմից ներդրողներին տրամադրվող ծառայությունները անվճար են և ուղղված են բավարարելու յուրաքանչյուր ներդրողի կոնկրետ պահանջները՝ ա) ներդրումային, հետներդրումային և ընդլայնման ծրագրերի աջակցում, բ) Հայաստանի բիզնես հանրության հետ կապերի ստեղծում, գ) քննարկումների ապահովում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ, դ) համապատասխան արդյունաբերական գոտիների և բիզնես տարածքների փնտրման հարցում աջակցություն, ե) համապատասխան ունակություններով մարդկային ներուժի ապահովում, զ) ներդրողների և համալսարանների միջև համգործակցության խթանում (ՏՋՆՆ, 2016): Այս ինստիտուտի արդյունավետությունը գնահատելու հարցում առկա են դժվարություններ, քանի որ այն քիչ ժամանակ է, որ գործում է:

1.5. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺ

Հայաստանը 1994 թվականից սկսած իրականացնում է բաց դռների քաղաքականություն, ընդունել է «Ազատ տնտեսական գոտիների» և «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքները: Ներդրումների հետ կապված որևէ այլ օրենսդրական կամ ենթաօրենսդրական փաստաթուղթ չի ընդունվել: Այլ կերպ ասած, ներդրումների միջավայրի բարելավմանը այնքան էլ լուրջ ուշադրություն չի հատկացվում: Օտարերկրյա ներդրումների մասին օրենքը սահմանում է օտարերկրյա ներդրումների տեսակներն ու ձևերը, օտարերկրյա ներդրումների պաշտպանության երաշխիքները և օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ընկերություններին տրամադրվող հավելյալ արտոնությունները, ինչպես նաև վեճերի լուծման ընթացակարգը: Հայաստանը 2011թ. հունիսին ընդունեց Ազատ տնտեսական գոտիների մասին օրենքը, իսկ 2011թ. ավարտին մշակեց համապատասխան կարգավորումները ազատ տնտեսական գոտիներում օտարերկրյա ներդրումներ ներգրավելու համար՝ ազատում ԱԱՀ-ից, եկամտահարկ/շահութահարկից, մաքսատուրքերից, գույքահարկից: ՏՋՆՆ մշակել է օտարերկրյա ներդրումների մասին նոր օրենք և շուտով այն կներկայացվի շահառուների դատին (Երկիր, 2016):

Համաձայն Օտարերկրյա ներդրումների մասին ՀՀ օրենքի (1994) հոդված 24-ի, օտարերկրյա ներդրողի եւ Հայաստանի Հանրապետության միջև ծագած բոլոր վեճերը պետք է քննվեն ՀՀ դատարաններում: Առևտրային վեճերը քննվում են ընդհանուր իրավասության դատարաններում: Մասնագիտացված վարչական դատարանները քննում են պետական ընկերությունների դեմ վեճերը: Վերջնական որոշումները կարող են գանգատարկվել Վերաքննիչ դատարանում, որը դատական համակարգի գերագույն մարմինն է:

Առևտրային արբիտրաժի մասին նոր օրենքը ընդունվել է 2007թ., որը ներդրողին ապահովում է առևտրային վեճի լուծման տարատեսակ հնարավորություններով: Հայ-ամերիկյան բազմազգ ներդրումային համաձայնագիրը (ԲՆՀ) երաշխավորում է, որ եթե վեճի կողմը ՀՀ-ում ամերիկացի ներդրող է, ապա նա կարող է հայցը քննությունը տեղափոխել միջազգային արբիտրաժային դատարաններ: Որպես միջազգային համաձայնագիր ԲՆՀ-ն գերակայություն ունի հայաստանյան օրենսդրության նկատմամբ, այս նորմը ամրագրված է նաև սահմանադրությամբ և կիրառվում է պրակտիկայում:

Չնայած ԱՄՆ կամ այլ օտարերկրյա դոնորների ներգրավվածությամբ վեճերը շատ փոքրաթիվ են, բայց այդ վեճերի քննության ընթացքում, ինչպես փաստում է ԱՄՆ դեսպանության հրապարակած զեկույցը, ներդրողների նկատմամբ խտրականության որևէ դեպք չի արձանագրել (UDS BEBA, 2016):

Պետք է նշել, որ 1992թ. հոկտեմբերի 16-ից սկսած Հայաստանն անդամակցում է Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնին, միաժամանակ անդամակցել է 1992թ. Վաշինգտոնում ստորագրված Ներդրումային վեճերի կարգավորման կոնվենցիային, որը տրամադրում է իրավական վեճերի կարգավորման ընթացքում հաշտության կամ արբիտրաժային ընթացակարգերի կիրառման համապատասխան գործիքակազմ (GTA, 2016): Հայաստանը անդամակցում է նաև Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնին (ICSID Convention) և Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կիրառման կոնվենցիային (1958թ. Նյու-Յորքի կոնվենցիա): Նյու-Յորքի կոնվենցիայի դրույթները

ներառվել են ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի մեջ, ինչը պահանջում է, որ տեղական դատարանները ճանաչեն և կիրառեն օտարերկրյա արբիտրաժային դատարանների որոշումները:

Հայաստանը նպատակ ունի զարգացնել վեճերի այլընտրանքային կարգավորման մեխանիզմները, որոնք ներառում են միջնորդությունը և արբիտրաժը: Վեճերի այլընտրանքային կարգավորումը ակնկալվում է կիրառել ոչ միայն առևտրային բնույթ ունեցող հարցերում (ներառյալ շարժական գույքը), այլև ընտանեկան և աշխատանքային վեճերում: Չնայած վեճերի այլընտրանքային կարգավորման հնարավորությունները հասանելի են նրանց համար, ովքեր փնտրում են դատավարության այլնընտրանքներ, դրանք լայնորեն չեն կիրառվում (UDS BEBA, 2016):

1.6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ, ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Քաղաքական և տնտեսական կայունությունը օտարերկրյա ներդրումների համար հիմնարար ցուցիչներից են: Նշվածի համատեքստում կան մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են ոլորտում ներդրումների հոսքը: Մասնավորապես Արցախի և Ադրբեջանի միջև ապրիլյան կարճաժամկետ պատերազմը բացասական ազդեցություն ունեցան ինչպես առևտրի, այնպես էլ ներդրումների վրա: Ներդրողների համար հիմնական ռիսկերն են՝ անվտանգության և արտադրական հզորությունների ֆիզիկական վնասման հնարավորությունները, գործառնությունների ամբողջական կամ մասնակի դադարեցումը, պատժամիջոցների և առևտրային սահմանափակումների առկայությունը պատերազմական կամ հետպատերազմյա ժամանակաշրջանում, լոգիստիկ շղթայի հետ կապված բացասական զարգացումները և այլն: Ըստ այդմ, քաղաքական ռիսկերը մեծ ազդեցություն ունեն օտարերկրյա ներդրողների կողմից գյուղատնտեսության ոլորտում ներդրումներ կատարելու ցանկության վրա: Ուստի հակամարտության լուծման ուղղությամբ շարունակական ջանքերը չափազանց կարևոր են:

Տնտեսական կայունությունը ևս մեծ նշանակություն ունի օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացում: Որպես գլոբալ ֆինանսական ճգնաժամի հետևանք, ՀՀ տնտեսությունը 2009թ. արձանագրեց շուրջ 14-տոկոսանոց անկում, ընդ որում վերականգնումը դանդաղ է ընթանում: 2016թ. երրորդ եռամսյակում Հայաստանն արձանագրեց ՀՆԱ-ի 2,6 տոկոս կրճատում, իսկ առաջին և երկրորդ եռամսյակում տնտեսական ակտիվությունը համապատասխանաբար կազմել է 4,3% և 1,6% (ԱՎԾ, 2016): Չնայած վերջին եռամսյակի տվյալները դեռ չեն հրապարակվել, բայց ակնհայտ է, որ ՀՆԱ-ի աճը չնչին է լինելու:

ՌԴ ռուբլու արժեզրկման հետևանքով ազգային արժույթի վայրիվերումների պատճառով ռուսաստանյան ավանդական շուկայից կախում ունեցող շատ արտահանողներ կրեցին լուրջ վնասներ և դժվարություններ:

Վճարման և առևտրային բացասական հաշվեկշիռը մեկ այլ հիմնախնդիր է, քանի որ այս տարբերությունը սովորաբար լրացվում է կամ պետական պարտքի, կամ դրսից փոխանցումների հաշվին: ՌԴ-ում տնտեսական դժվարությունների առկայության և որպես արդյունք ՌԴ ռուբլու արժեզրկման հետևանքով նվազեցին ՌԴ-ից փոխանցումները, ինչը հանգեցրեց ավելի պետական պարտքի ավելացմանը: Ավելին, ՌԴ ռուբլու արժեզրկման ազդեցությունը մեղմելու համար ՀՀ ԿԲ-ն 2015թ. ավելացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչը ևս իր բացասական ազդեցությունն ունեցավ գործարար հատվածի վրա: Միայն վերջերս ԿԲ-ն սկսեց նվազեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

Այնուհանդերձ ՀՀ տնտեսության ամենակարևոր հիմնախնդիրը կառուցվածքային է: Պետական մարմինների անարդյունավետությունը և կոռուպցիան, հատկապես այն մարմիններում, որոնք պարբերաբար շփվում են բիզնեսի ներկայացուցիչների հետ, դեռ մնում է չլուծված հիմնահարց: Ըստ Հերիթիջ ֆաունդեյշնի գնահատման, կաշառքը և ծանոթ-բարեկամ մեխանիզմը տարածված են պետական պաշտոնյաների շրջանում, ովքեր շատ հազվադեպ են պատժվում կամ ազատվում իրենց զբաղեցրած պաշտոններից: Դատական համակարգը անկախ և թափանցիկ չէ (Հերիթիջ ֆաունդեյշն, 2016): Կոռուպցիան դեռևս մնում է լուրջ խոչընդոտ. չնայած վերջին տարիներին կառավարությունը մի շարք բարեփոխումներ է արել, որոնց շնորհիվ որոշակի

բարելավում է նկատվում ներդրումային միջավայրի առումով, սակայն կոռուպցիան լուրջ հիմնախնդիր է այնպիսի կարևոր ուղղություններում, ինչպիսիք են դատական համակարգը, հարկային և մաքսային գործառնությունները, առողջապահությունը, կրթությունը, զինվորական ծառայությունը և իրավակիրարկումը: Չնայած այն հանգամանքին, որ 2004թ. սկսած Հայաստանն ընդունել է հակակոռուպցիոն տարբեր ռազմավարություններ, տեսանելի հաջողություններ դեռևս չեն գրանցվել: Համաձայն վերջերս իրականացված վերլուծության (Abdih and Medina, 2013), ՀՀ տնտեսությունում ստվերայնությունը կազմում է ՀՆԱ-ի ավելի քան 40%-ը:

Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿՀՀ)-ի գնահատականի շարժընթացը ՀՀ-ում

Տարի	2015	2014	2013	2012
ՀՀ ԿՀՀ արժեքը և զբաղեցրած տեղը	35 (95րդ)	37 (94րդ)	36 (94չդ)	34 (105րդ)
Վրաստանի ԿՀՀ արժեքը և զբաղեցրած տեղը	52 (48րդ)	52 (50րդ)	49 (55րդ)	52 (51րդ)

Աղբյուրը՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլի կոռուպցիայի ընկալման համաթիվ, 2016

Նոր կառավարությունը պետական ինստիտուտների արդյունավետության բարձրացման նպատակով ձեռնամուխ է եղել օպտիմալացման օրակարգին, սակայն դեռ որևէ առանձնահատուկ միջոցառումների մասին խոսել չի կարելի: Ավելին, պարզ չէ, թե արդյոք որպես օպտիմալացման արդյունք պետական մարմինները ունակ կլինեն ավելի լավ որակի ծառայություններ մատուցել: Վերջերս վարչապետը նշեց, որ ինքը օպտիմալացման գործընթացը կվերանվանի արմատական կրճատումներ (Արմենպրես, 2016): Ինչ է դա նշանակում և ինչքանով այն կազդի տնտեսության վրա՝ դժվար է գնահատել, սակայն ավելացնում է անորոշությունը:

Պետական պարտքը չի թիրախավորված տնտեսության հիմնարար խնդիրների լուծմանը: Օրինակ, դիտարկենք պետական ֆինանսավորման հատկացման ձևը: Սոցիալական և պաշտպանական բնույթի ծախսերը մեծ մասնաբաժին ունեն պետական բյուջեում, մինչդեռ կրթությունը, առողջապահությունը և պետական բարիքների այլ առանցքային ուղղություններ պատշաճ ֆինանսավորում չեն ստանում: Ներկայումս, երբ մի շարք երկրներ պայքարում են գիտելիքահենք և տեխնոլիագահենք տնտեսության կառուցման համար, Հայաստանը դեռ ագրարային հասարակությունից արդյունաբերական հասարակության անցման վեկտորի վրա է: Առանց կառուցվածքային փոփոխությունների և արհեստավարժ պետական ինստիտուտների այս խնդիրը դժվար լուծելի է:

Ընդհանրացնելով պետք է նշել, որ մոտեցումը պետք է թիրախավորված լինի ավելորդ խոչընդոտների վերացման և օտարերկրյա ներդրողների և պետական կառույցների միջև կապերի խորացման վրա: Սա առաջին հերթին նշանակում է օրենսդրության և կարգավորումների վերանայում, սեփականության իրավունքների կիրառում, կանխատեսելի իրավական միջավայրի և աջակցող ինստիտուտների ստեղծում: Այս դեպքում կառավարությունը կարող է, օրինակ, վերանայել և սահմանել իրավունքներ արոտավայրերի վարձակալության հարցում, ստեղծել հողային գրանցամատյան և ապահովել դրա առցանց հասանելիությունը, բարելավել հողի շուկայի կարգավորիչ մեխանիզմները, հստակ կերպով սահմանել կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների

դերակատարությունը: Համանման գործողություններ պետք է իրականացնել ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում, ինչը կերաշխավորի, որ ջուրը ներդրողին կմատակարարվի առանց խափանումների:

1.7. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Փոփոխված աշխատանքային օրենսգիրքը, որը ուժի մեջ է մտել 2005թ. հունիսին, հիմնականում համահունչ է միջազգային չափորոշիչներին: Օրենսդրությունը սահմանում է 40-ժամյա աշխատանքային շաբաթ, տարեկան 20-օրյա պարտադիր վճարովի արձակուրդով: Ներկայումս նվազագույն ամսական աշխատավարձը ՀՀ-ում կազմում է 55000 դրամ (112 ԱՄՆ դոլար): Որակյալ և արհեստավարժ սկսնակ կադրերի (ինչպիսիք ծրագրավորող ճարտարագետներն են) ամսական աշխատավարձը տատանվում է մոտ 500-600 ԱՄՆ դոլարի սահմաններում: Պետական հատվածում աշխատավարձը հաճախ էականորեն ավելի քիչ է, քան մասնավոր հատվածում (UDS OIA, 2016):

ՀՀ օրենսդրությունը երաշխավորում է աշխատողների իրավունքները, որոնք կարող են ձևավորել անկախ միություններ և անդամակցել դրանց: Նշվածը չի վերաբերում իրավակիրառ մարմինների և ռազմական ուժերի անձնակազմում աշխատողներին: Օրենքը թույլարում է գործադուլների իրականացում, նույն բացառություններով, ինչպես նաև թույլատրում է կոլեկտիվ բանակցություններ: Օրենսդրությունը մեկնաբանում է, որ աշխատողների իրավունքները չեն կարող սահմանափակվել միություններում անդամակցության հետևանքով: Աշխատանքային կազմակերպությունները դեռևս թույլ են՝ գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների հետևանքով. ըստ այդմ կոլեկտիվ բանակցությունները տարածված չեն Հայաստանում (UDS BEBA, 2016):

Նյու-Յորքում տեղի ունեցած ներդրումային համաժողովի ընթացքում մի շարք շնորհանդեսներում խոսվում էր էժան և որակյալ աշխատուժի մասին՝ որպես ներդրողի համար առավելություն: Համաձայն գլոբալ մրցունակության համաթվի, պատկերը այլ է: Չնայած մարդկային կապիտալը, ինչպես նշում է հայկական կողմը, համեմատաբար էժան և որակյալ է, սակայն տաղանդների պահպանման և ներգրավման առումով 138 պետությունների շարքում ՀՀ-ն զբաղեցնում է համապատասխանաբար 109-րդ և 102-րդ տեղերը (WEF, 2016): Այլ խոսքով, ՀՀ-ն բացասական հաշվեկշիռ ունի տաղանդների ներհոսքի առումով: Սա չափազանց մտահոգիչ է՝ հաշվի առնելով գլոբալ տնտեսական համակարգում տեղի ունեցող փոխակերպումները:

Ներկայումս մենք կարող են տեսնել այն իրողությունը, երբ որոշ հետինդուստրիալ երկրներ շարժվում են գիտելիքահենք տնտեսական համակարգերի կառուցման ուղղությամբ, ինչը հիմնված է ստեղծագործ գաղափարների, նորամուծության և նոր տեխնոլոգիաների վրա, որի պարագայում մարդկային կապիտալը կարևորագույն նշանակություն ունի:

Չնայած Հայաստանն այս ուղղությամբ ներուժ ունի, շատ տաղանդներ իրենց գիտելիքների և ունակությունների ավելի լավ կիրառություն գտնելու նպատակով ստիպված են արտագաղթել: Հայաստանը դիրքավորված է համապատասխանաբար 93 և 71-րդ դիրքերում հիմնական և բարձրագույն կրթության որակի և վերապատրաստումների առումով (WEF, 2016): Եթե ավելի խորքային վերլուծության ենթարկենք տվյալները, ապա դպրոցների կառավարման որակի և

անձնակազմի վերապատրաստման հարցում առկա են նշանակալի թերություններ: Այլ ցուցիչների առումով ՀՀ-ն զբաղեցնում է միջին հորիզոնականներ:

Հայաստանում հատկապես թույլ և անարդյունավետ է գյուղատնտեսական կրթությունը, այն կապ չունի հետազոտությունների և գիտության հետ և չի համապատասխանում ոլորտի կարիքներին: Ավելին, բուն գյուղատնտեսության ոլորտում իրավիճակը ավելի անմխիթար է: Շատ ջերմոցատերեր, որոնց հետ մենք հարցազրույց ենք արել, արհեստավարժ ջերմոցային ագրոնոմների պակասը մատնանշում են որպես կարևորագույն հինախնդիրներից մեկը: Հայրենական բարձրագույն կրթությունը և միջին մասնագիտական կրթությունը չեն բավարարում առկա պահանջները:

Ինչ վերաբերում է էժան աշխատուժին, ապա գլոբալ տնտեսությունում աստիճանաբար հրաժարվում են իրենց արտադրությունները էժան աշխատուժով երկրներում տեղաբաշխելուց, ի հաշիվ այն բանի, որ ինտենսիվ աշխատուժ պահանջող գյուղատնտեսական գործառնությունները փոխարինվում են գործառնությունների ավտոմատացումով և մեքենասարքավորումներով: Հետևաբար, մատչելի աշխատուժի դերակատարման գործոնը աստիճանաբար կնվազի ներդրողների համար: Այնուհանդերձ, կարևորվում է ոչ միայն արհեստավարժ ագրոնոմների և սննդի վերամշակման մասնագետների վերապատրաստումը, այլ նաև տեխնոլոգիաներին միտված ինստիտուտների զարգացումը: Նույն համաթիվը, օրինակ ՀՀ-ն դասակարգում է 100-րդը գիտահետազոտական ինստիտուտների որակի և 92-րդը՝ ընկերությունների հետազոտությունների և զարգացման վրա կատարվող ծախսերի առումով, ինչպես նաև բուհ - արտադրություն համագործակցության առումով (WEF, 2016): Սա վկայում է, որ տեխնոլոգիական զարգացումը անուշադրության է մատնված:

1.8. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ և ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

ՀՀ անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) կառավարության կողմից ներկայացվում էր որպես ներդրողների համար առանց խոչընդոտների 180 մլն-անոց շուկայի հասանելիության հնարավորություն (EEU, 2016):

2015թ. հունվարին ՀՀ-ի անդամակցությունը ԵԱՏՄ-ին մեծ մարտահրավեր էր տնտեսության համար: Հարկ է նշել, որ ՀՀ-ում հարկերը ավելի բարձր են համեմատած ՌԴ-ի, Բելառուսի և Ղազախստանի հարկերը և ավելի ցածր են, քան ԵՄ միջինը: Ավելին, որպես ԵԱՏՄ նոր մաքսային ընթացակարգերի ներդրման արդյունք, ՀՀ ընկերությունները բախվում են մի շարք հավելյալ դժվարությունների: Չնայած կառավարությունը խոստանում է օժանդակել ՓՄՁ-ներին, սակայն իշխանությունները փոփոխություններ կատարեցին հարկային օրենսդրությունում, ինչը ՓՄՁ սուբյեկտների համար էականորեն կավելացնի հարկային բյուրոկրատիան (Bertelsmann Stiftung's Transformation Index (BTI) 2016):

Մատնանշվում է այն փաստը, որ ԵԱՏՄ տարածքը և ռուսական շուկան գյուղմթերքների արտահանման հիմնական ուղղություններն են: Ավելին, հայկական ապրանքները լայնորեն ճանաչված են ու ունեն բարձրորակի ընկալում: Կարևոր փաստարկներից է նաև այն, որ հայաստանյան շուկան փոքր է, ցածր գնողունակությամբ, իսկ ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո այն կարող է կամուրջ հանդիսանալ ԵԱՏՄ ոչ անդամ երկրների և ԵԱՏՄ-ի միջև: Սակայն այս պնդումը երկու կողմ ունի. մի կողմից, եթե ապրանքը համապատասխանում է ծագման երկրի պահանջներին, ապա այն կարող է մտնել ԵԱՏՄ առանց որևէ խոչընդոտի: Սակայն ԵԱՏՄ առավելությունները մնացին թերօգտագործված, հայկական ընկերությունները շարունակում են արտահանել միայն ռուսական շուկա, իսկ Ղազախստանի, Բելառուսի և Ղրղզստանի հետ առևտրային հարաբերությունների վրա ազդեցությունը բացակայում է:

Չնայած ՀՀ-ն ԵՄ-ի հետ չկնքեց Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր, սակայն դեռ օգտվում է ԵՄ-ի հետ արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգով (GSP+) առևտրի կարգավիճակից, որի շնորհիվ մի շարք հայկական ընկերություններ հաջողությամբ արտանում են ԵՄ շուկաներ:

Բացի ԵԱՏՄ-ին անդամակցության առավելություններից, պետական պաշտոնյաները մատնանշում են նաև արտոնյալ առևտրի պայմանները ԵՄ-ի, ԱՄՆ-ի, Ճապոնիայի և Կանադայի հետ, ինչպես նաև բազմակողմ ազատ առևտրի համաձայնագիրը Վրաստանի և ԱՊՀ երկրների հետ: Բացի այդ, նրանք մշտապես խոսում են Իրանի հետ առևտրի հարաճուն կարևորության մասին:

Այնուամենայնիվ, անդամակցությունը մի շարք հավելյալ ռիսկեր է առաջացնում հնարավոր ներդրողների համար: Նախ, շատ փորձագետներ և հայտնի տնտեսագետներ նշում են, որ ինտեգրումն առավելապես քաղաքական է, քան տնտեսական, ինչը նշանակում է, որ անդամ երկրները կարող են ընդլայնել կարգավորման և որոշումների ընդունման իրենց ոլորտները, ինչը կարող է մեծացնել անորոշությունները: Այլ կերպ ասած, առևտրի հետ կապված հարցերում որոշումները կայացվում են առավելապես ԵԱՏՄ մակարդակում, այլ ոչ թե ազգային մակարդակում: Երկրորդ, ռուսական տնտեսությունը ճգնաժամի մեջ է, ինչն իր անմիջական ազդեցությունն է ունենում առևտրի վրա:

Ավելին, ներմուծման փոխարինման քաղաքականությունը, ինչը որդեգրել է ՌԴ-ն, կսրի մրցակցությունը ռուսական շուկայում, ինչպես նաև կստեղծի ռուսական գյուղմթերքների ՀՀ ներմուծման հետ կապված երկարաժամկետ ռիսկեր: Բացի դրանից, կա Վրաստանի շուկայի մատչելիության հետ կապված ռիսկ. քանի որ Վրաստանը կնքել է ասոցացման համաձայնագիր, միջնաժամկետ հեռանկարում այն կարող է խստացնել առևտրի կարգավորումը, ինչն էլ կդժվարեցնի հայկական մթերքների մուտքը Վրաստան: Վերջապես, արտոնյալ առևտրի ռեժիմները տրվում են որոշակի ժամկետով, հետևաբար այս առումով ևս առկա են անորոշություններ, մասնավորապես չկան երաշխիքներ, որ ԱՄՆ-ը, ԵՄ-ն կամ այլ երկիր մշտապես արտոնություններ կտրամադրի ՀՀ-ին:

2015թ. մայիսին ՀՀ-ն վավերացրեց Առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագիրը ԱՄՆ-ի հետ: Ստեղծվեց առևտրի և ներդրումների հայ-ամերիկյան խորհուրդ, որը պետք է քննարկի բազմակողմանի առևտրի և ներդրումների ու դրանց հետ փոխկապակցված հարցերը և ելքեր փնտրի երկու երկրների միջև առևտրային և ներդրումային հարաբերությունների խորացման համար:

Հայ-ամերիկյան բազմակողմանի ներդրումային համաձայնագիրը սահմանում է, որ եթե առկա է վեճ ամերիկյան ներդրողի և ՀՀ-ի միջև, ապա ներդրողը կարող է ընտրել միջազգային արբիտրաժում վեճի քննության տարբերակը, որի վճիռը քննարկման ենթակա չի լինի: Չնայած ՀՀ օրենսդրությունը համապատասխանում է Մտավոր սեփականության իրավունքի առևտրային ասպեկտների վերաբերյալ համաձայնագրի (TRIPS) հետ և համապատասխան երաշխիքներ է տրամադրում մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության առումով, այնուամենայնիվ պետք է միջոցառումներ իրականացնել դրա իրավակիրարկման բարելավման առումով (UDS BEBA, 2016):

1.9. ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Քննարկումների ընթացքում ագրոբիզնեսի ընկերությունների շատ սեփականատերեր կայունությունը մատնանշում էին որպես հիմնախնդիր ներդրողների համար: Այլ կերպ ասած, անորոշությունը երկրի հիմնական մարտահրավերն է, որը խոչընդոտում է ներդրումների հոսքը: Չնայած շատ արտադրողներ անորոշություն ասելով հասկանում են քաղաքական կամ տնտեսական կայունության հետ կապված խնդիրները, ինչը քննարկել ենք վերևում, սակայն այլք դրա տակ հասկանում են վստահությունը կառավարության կողմից իրականացվող միջոցառումների հանդեպ: Ներդրողները շահագրգռված են, որ խաղի կանոնները լինեն կայուն, այլ ոչ թե հաճախակի փոփոխվող: Որպես օրինակ կարելի է նշվել բնական գազի սակագինը, ինչը շատ կարևոր է ջերմոցային տնտեսություններում ներդրողների համար: Ներկայումս կառավարությունը որոշել է նվազեցնել գազի գինը ջերմոցային տնտեսությունների համար: Սա կարող է դիտարկվել որպես լավ խթան, եթե այն հստակ լինի որոշակի ժամանակահատվածի համար: Մասնավորապես առաջարկվում է, որ պետությունը երաշխավորի, որ անփոփոխ է թողնելու բնական գազի սակագինը առնվազն հինգ տարի: Նմանապես ներդրողները հետաքրքրված են կայունություն տեսնել հարկային քաղաքականության մեջ, ինչպես նաև աննշան փոփոխություններ հումքի ներմուծման սակագներում: ԵԱՏՄ անդամակցության հետևանքով մինչև 2020թ. երրորդ երկրներից ներմուծվող մի շարք սարքավորումների և հումքի սակագներ բարձրանալու են, ինչը ստեղծելու է ռիսկեր այն ներդրողների համար, ովքեր

հիմնվելու են որոշակի ներդրանքների և սարքավորումների ներմուծման վրա: Բացի այդ, փոխարժեքի տատանումները ևս հավելյալ ռիսկային գործոն են:

ԿԲ-ն շարունակաբար իրականացնում է կոշտ դրամավարկային քաղաքականություն և հետևում է ֆիսկալ կարգուկանոնին, որի միջոցով ապահովում է մակրոտնտեսական կայունությունը: Սակայն տոկոսադրույքները բավական բարձր են: Ոլորտը լրջագույն վերափոխումների և զարգացման կարիք ունի, քանի որ բանկային և ֆինանսական հատվածները հարկադրված են սահմանափակվել երկրի ֆինանսական հատվածի փոքր չափերով (ընդհանուր ակտիվների մեծությունը դեռևս գտնվում է ՀՆԱ-ի 20%-ից շատ ավելի ցածր մակարդակի վրա) և կապիտալի թերզարգացած շուկաներով:

Ավանդաբար բաց և ազատական ՀՀ տնտեսությունը հարկադրված է կիրառել ավելի բարձր սակագներ և ԵԱՏՄ-ի ավելի հովանավորչական քաղաքականությունը: Այս հանգամանքը ոչ միայն կսանձազերծի գների բարձրացում, այլ նաև կարող է հանգեցնել ԱՀԿ-ին ՀՀ անդամակցության վերանայման վերաբերյալ լուրջ բանակցությունների:

Կարևոր հանգամանք է նաև ներքին քաղաքական իրավիճակը և կայունությունը: Նոր կառավարությունը հայտարարել է լրջագույն վերափոխումների օրակարգ, ինչը ներառում է ավելի արդյունավետ պայքար կոռուպցիայի դեմ և տնտեսության որոշ հատվածներում մենաշնորհայնացման հետ կապված խնդիրների լուծում, օրենքների իրավակիրառման գործելակերպ և հարկային վարչարարության բարելավում, ինչպես նաև հարկատուների իրավահավասարություն, մաքսային ընթացակարգերի բարելավում և պետական մարմինների՝ ընդհանուր առմամբ ավելի արհեստավարժ և արդյունավետ աշխատանք: Չնայած այս գործընթացները ստեղծում են դրական ակնկալիքներ, պետք է նշել, որ մի շարք քաղաքական կարևոր իրադարձություններ են սպասվում. 2017թ. նախատեսվում են խորհրդարանական ընտրություններ, որով կամրագրվի կիսանախագահական մոդելից խորհրդարանական մոդելին անցումը 2018թ.-ին:

1.10. ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

2017թ. Հայաստանը փոքր-ինչ բարելավել է իր դիրքերը գործարարությամբ զբաղվելու համաթվով և ներկայումս զբաղեցնում է 38-րդ դիրքը:

Այնուհանդերձ. կան մի շարք լրջագույն հիմնահարցեր, որոնք պետք է լուծի կառավարությունը, որպեսզի օտարերկրյա ներդրողների համար ավելանա գրավչությունը: Համաձայն համաթվի, ՀՀ-ն դեռ էականորեն ետ է մնում մի շարք ցուցիչների գծով, ինչպիսիք են շինթույլտվությունները, էլեկտրականության հասանելիությունը, փոքր բաժնետերերի պաշտպանությունը, հարկերի վճարումը և անվճարունակությունը: Սակայն եթե մենք համադրենք այս տվյալները ձեռնարկությունների հարցումների հետ, ապա ակնհայտ է, որ կան լուծման ենթակա մի շարք այլ հիմնահարցեր:



Աղբյուրը՝ WB 2016, Doing Business Index

Այս հիմնահարցերից են ֆինանսների մատչելիությունը: Հայաստանը նշանակալիորեն բարելավել է իր դիրքերը վարկերի ստացման ցուցիչով, 42-րդ տեղից տեղափոխվելով 20-րդ տեղ, սակայն ընկերությունների հարցումը վկայում է մի շարք հիմնախնդիրներ, ըստ որի վարկը մատչելի է միայն որոշ սուբյեկտների համար: Նշվածի համատեքստում հիմնախնդիրներից մեկը վարկի ստացման համար անհրաժեշտ գրավի արժեքն է: Այլ կերպ ասած, դժվար է գումար հայթայթել լավ ծրագրի կամ գաղափարի ֆինանսավորման համար, քանի որ վարկ ստանալու համար անհրաժեշտ է արժեքավոր գրավ, ինչն առավելապես խնդիր է ՓՄՁ սուբյեկտների համար: Քանի որ արժեթղթերի շուկան զարգացած չէ ՀՀ-ում, բանկերը սովորաբար հանդիսանում են ֆինանսավորման միակ աղբյուրը: Գործարարությամբ զբաղվելու համաթվով հարցերից մեկը, որը առաջնահերթ լուծման կարիք ունի, հարկային դրույքաչափերն են, ինչն արտացոլված է նաև ընկերությունների հարցման մեջ, մասնավորապես հարցված ընկերությունների շուրջ 37%-ը որպես հիմնական խոչընդոտ մատնանշում է հարկային

դրույքաչափերը:

Կառավարությունը սովորաբար չափից ավելի մեծ կարևորություն է տալիս այս ցուցիչներին, և շարունակական աշխատանքներ են անհրաժեշտ ներդրումային միջավայրի բարելավման համար: Հարևան Վրաստանը, օրինակ, որտեղ ներդրումների հոսքը զգալիորեն ավելի մեծ է, գերազանցում է ՀՀ-ին այս համաթվով և զբաղեցնում է 13-րդ տեղը (WB, 2016):

ԱՄՀ-ն ահազանգում է, որ հարկահավաքման և գործարար միջավայրի առումով արմատական բարելավումների կարիք կա, նշելով, որ ՀՀ-ում գործարարությամբ զբաղվելը դեռևս բավական բարդ է՝ պայմանավորված երկրի աշխարհաքաղաքական մեկուսացմամբ և փակ սահմաններով, պետական համակարգում առկա կոռուպցիայով և ընդհանուր առմամբ պարզ և կանխատեսելի կարգավորումների բացակայությամբ: ԱՄՀ-ն մտահոգված է նաև հարկերից խուսափումների չափերի նվազեցման և մրցունակության բարձրացման հարցում կառավարության ձախողմամբ: Կառավարությունը անբարենպաստ արտաքին գործոնները պետք է չեզոքացնի հիմնական կառուցվածքային վերափոխումների իրականացման միջոցով:



Աղբյուրը՝ WEF, GCI 2016

Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հաշվարկվող մրցունակության համաթիվը մեկ այլ կարևոր փաստաթուղթ է, որը պետք է դիտարկվի կառավարության կողմից, քանի որ այն պարզաբանում է ներդրումների ցածր մակարդակի հիմնարար պատճառները: Ստորև ներկայացված գծապատկերը վեր է հանում թույլ կետերը, հետևաբար կառավարությունը պետք է միջոցառումներ իրականացնի դրանք բարելավելու ուղղությամբ:

Շուկայի փոքրության ցուցիչով ՀՀ-ն վատագույն դիրքերում է՝ 120-րդը 138 երկրների մեջ (WEF,

2016): Սա նշանակում է, որ ներդրողը հստակորեն պետք է դիտարկի արտահանման հնարավորությունները և որոշի արտահանման շուկաները: Փոքրածավալ ներդրողները կարող են դիտարկել տեղական և խիստ մրցակցային շուկայի վրա կենտրոնանալու հնարավորությունը: Ավելին, շուկան ինքնին որոշ դեպքերում արդյունավետ չէ: Հետևաբար ներդրողները կփնտրեն արտահանման հնարավոր շուկաների հասանելիություն: Մասնավորապես ԵԱՏՄ-ին անդամակցությունից հետո Հայաստանը կարող է բանակցել ազատ առևտրի համաձայնագրերը միայն որպես ԵԱՏՄ անդամ երկիր, այդ իսկ պատճառով Հայաստանը ներկայումս ազատ առևտրի համաձայնագրեր ունի միայն ԱՊՀ շուկաների և Վրաստանի հետ: ՀՀ-ն մաքսային միության անդամ է ՌԴ-ի, Ղազախստանի, Ղրղզստանի և Բելառուսի հետ և բացի այդ, օգտվում է արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգով (GSP+) նախատեսված՝ ԵՄ-ի հետ արտոնյալ առևտրային ռեժիմից, ինչպես նաև GSP համակարգով նախատեսված՝ ԱՄՆ-ի, Ճապոնիայի և Կանադայի հետ արտոնյալ առևտրի ռեժիմից: Բացի այդ վերջերս ԵԱՏՄ-ն ավարտեց ազատ առևտրի վերաբերյալ բանակցությունները Վիետնամի հետ: Ներկայումս ԵԱՏՄ-ն ազատ առևտրի համաձայնագրերի վերաբերյալ բանակցում է այլ երկրների հետ, մասնավորապես՝ Չինաստանի, Իսրայելի, Սինգապուրի և Իրանի:

Հայաստանը բավական անմխիթար վիճակում է գտնվում դատական իշխանության անկախության և սեփականության իրավունքների պաշտպանության առումով: Ավելորդ է նշել, որ այս ցուցիչները չափազանց կարևոր են այն ընկերությունների համար, որոնք պատրաստվում են ներդրումներ կատարել հետազոտությունների և զարգացման մեջ: Ընդհանրապես, բացի այս երկու ցուցիչներից, ՀՀ-ն այլ երկրներից դեռ էականորեն ետ է մնում օրենսդրական համակարգի արդյունավետության և կորպորատիվ բաժնետոմսերի արդյունավետության ցուցիչներով:Ներդրումների հետ կապված հաջորդ ցուցիչը ենթակառուցվածքն է, որտեղ ՀՀ-ն դեռ շատ անելիքներ ունի: Այս ցուցիչներից շատերը շատ կարևոր են գյուղատնտեսությունում ներդրողների համար, օրինակ՝ ճանապարհների և հատկապես գյուղական ճանապարհների որակը, երկաթուղային ենթակառուցվածքները:

ՀՀ կառավարությունը և ԿԲ-ն պետք է մեծ ուշադրություն դարձնեն ֆինանսական շուկայի զարգացմանը: Մասնավորապես, համաթվի համաձայն Հայաստանը բիզնես կարիքներին բավարարող ֆինանսական ծառայությունների ցուցիչով զբաղեցնում է 99-րդ հորիզոնականը 138 երկրների շարքում, 87-րդ տեղը ֆինանսական ծառայությունների մատչելության ցուցիչով, 119-րդ տեղը արժեթղթերի շուկայի միջոցով ֆինանսավորման ցուցիչով: ՀՀ-ն աշխարհում զբաղեցնում է 54-րդ հորիզոնականը Տնտեսական ազատության համաթվով: Ամփոփելով պետք է նշել, որ ՀՀ-ն մրցունակության բոլոր ցուցիչների հիման վրա կատարված հաշվարկներով զբաղեցնում է 79-րդ հորիզոնականը 138 երկրների շարքում. Կառավարությունը պետք է համակ ուշադրություն դարձնի այն ցուցիչների վրա, որոնք առավել կարևոր են ներդրողների համար: Առավել կարևորների ցանկում են ենթակառուցվածքների անորակությունը, մակրոտնտեսական միջավայրը, կրթությունը, պետական մարմինների աշխատանքը, տեխնոլոգիաները և նորարարությունը (WEF, 2016):

ՀՀ-ն բավական բարձր դիրքեր է զբաղվեցնում Լոգիստիկ կատարողականի համաթվով: Այս ցուցանիշով ՀՀ-ն ԱՊՀ տարածաշրջանում զբաղեցնում է 3-րդ տեղը և ապահովում է մաքսային և լոգիստիկ որակի բարձր կատարողական:

Հայաստանն ունի 2 ազատ տնտեսական գոտիներ, որոնք ազատված են շահութահարկից, ԱԱՀ-ից և գույքահարկից: ՀՀ-ում ընկերությունները կարող են լինել 100% օտարերկրյա սեփականություն: ՀՀ-ն հավասար իրավունքներ է տրամադրում թե տեղական, թե օտարերկյա ներդրողներին: ՀՀ-ում չկան սահմանափակումներ փոխանցումների կամ շահույթի հայրենադարձման առումով: ՀՀ-ն ունի հարակայուն բանկային համակարգ, որը գործում է միջազգային չափորոշիչներին համապատասխան, արտարժույթի ազատ փոխարկելիություն, համեմատաբար կայուն արժույթ: Բացի այդ, երկիրը հատուկ արտոնություններ է տրամադրում այն ներդրողների համար, որոնք ներդրումներ են անում SS ոլորտում և նորաստեղծ բիզնեսներում, սահմանամերձ շրջաններում կամ խոշոր արտահանող ընկերություններում (ՀՋՀ, 2016):

ՀՀ-ն ներկայումս որոշ խթաններ է առաջարկում արտահանողներին (արտահանումը ազատված է մաքսատուրքերից, իսկ արտահանելիս ԱԱՀ-ն վերադարձվում է) և օտարերկրյա ներդրողներին (եկամտահարկից ազատում, վնասները անորոշ ժամկետով փոխանցելու հնարավորություն, ժամանակավոր ներմուծման ռեժիմներ ներմուծված հումքի համար՝ առանց ԱԱՀ-ի և մաքսատուրքի վճարման):

ՀՀ կառավարությունը 2005թ. փոփոխություններ կատարեց ԱԱՀ-ի օրենքում՝ թույլատրելով ընկերություններին հետաձգել ԱԱՀ-ի վճարումը մեկ կամ երկու տարով որոշ ներմուծվող ապրանքների համար, որոնք օգտագործվում են արտադրության մեջ: 2008թ գլոբալ ֆինանսական ճգնաժամից հետո կառավարությունը հետագա փոփոխություններ արեց նույն օրենքում, որով ԱԱՀ վճարումները կապիտալ ներդրումների հետ կապված ներմուծման մասով կարող են հետաձգվել մինչև 3 տարի: 2015թ. ՀՀ կառավարությունը մաքսատուրքերից ազատեց հումքի և սարքավորումների ներմուծումը ԵԱՏՄ ոչ անդամ երկրներից, որոնք կապված են ներդրումների հետ: Բացի այդ, Օտարերկրյա ներդրումների մասին օրենքի համաձայն, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարելի է բանակցել մի շարք հատուկ ժամանակավոր միջոցառումների վերաբերյալ՝ այն ներդրումների պարագայում, որոնք վերաբերում են տնտեսության որոշակի ոլորտների և/կամ երկրի համար ունեն ռազմավարական նշանակություն:

1.11 ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐ ԵՎ ՊՈՐՏՖԵԼԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

ՀՀ բանկային համակարգը բավական լավ կարգավորված է, սակայն ՀՀ ֆինանսական հատվածը թերզարգացած է: ԱՄՀ-ի կողմից կատարված գնահատումները փաստում են, որ բանկային հատվածի ակտիվները կազմում են ընդհանուր ֆինանսական համակարգի ակտիվների 90 տոկոսը: Ֆինանսական միջնորդությունը գտնվում է ցածր մակարդակի վրա: Քանի որ ՀՀ բանկերը ծառայության և այլ վճարներ են գանձում, վարկառուի կողմից վճարվող փաստացի տոկոսադրույքը բավականին բարձր է ստացվում: Գրեթե բոլոր բանկերը պահանջում են ՀՀ տարածքում գտնվող գրավ, ինչը խանգարում է հնարավոր վարկառուներին շուկա մտնել: Սա ՓՄՁ-ի և ստարթափների համար հիմնական խոչընդոտն է:

ՀՀ կառավարությունը ողջունում է օտարերկրյա պորտֆելային ներդրումները, որի համար առկա է համապատասխան իրավական համակարգ: Սակայն ՀՀ արժեթղթերի շուկան թերզարգացած է և ունի միայն նվազագույն շրջանառություն, որը իրականացվում է ՆԱՍԴԱՔ-ՕՄՍ բորսայի միջոցով: Մեծ գումարների փոխանցման իրացվելիությունը դժվարացված է, քանի որ թե ընդհանուր տնտեսությունը և թե ֆինանսական շուկան ունեն փոքր ծավալներ: ՀՀ կառավարությունը հույս է փայփայում, որ որպես 2014թ. իրականացված կենսաթոշակային բարեփոխումների արդյունք, որոնք ակտիվների կառավարման երկու միջազգային ընկերություններ բերեցին Հայաստան (Ամունդի և Յ-Կվադրատ), կապիտալի շուկան ավելի ակտիվ դերակատարություն կունենա երկրի ֆինանսական հատվածում: ՀՀ-ն կատարում է ԱՄՀ-ի Հոդված VIII-ի պահանջները՝ սահմանափակումներից ազատելով վճարումների և փոխանցումների ընթացիկ միջազգային գործարքները: Վարկը տրամադրվում է շուկայական պայմաններով և օտարերկրյա ներդրողը կարող է տեղում վարկ ստանալ: (UDS BEBA, 2016)

2. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Ներդրումների խթանման գործակալության կարողությունների հզորացում:** Հզորացնելով ներդրումների խթանման գործակալության կարողությունները, Հաաստանի զարգացման հիմնադրամը պետք է ձգտի ավելի լիարժեքորեն բավարարել ոլորտային ներդրողների կարիքները: ՀՁՀ-ն ունի ներդրումներով զբաղվող երկու բաժին, որոնցից մեկն աշխատում է ներդրումային ծրագրերի մշակման, իսկ մյուսը՝ դրանց խթանման ուղղությամբ: Անհրաժեշտ է ունենալ մեխանիզմ, որով երկու բաժիններն էլ կունենան բավարար կարողություններ՝ ներդրողներին գյուղատնտեսությանն առնչվող ծառայություններով ապահովելու համար: Այն պետք է ստեղծի գյուղնախարարության հետ կանոնավոր գործակցության մեխանիզմ: Ներկայումս այդպիսի մեխանիզմը բացակայում է կամ շատ թույլ է:

   Գործակալությունը վարում է վեբկայք, որը հնարավոր ներդրողներին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, սակայն կայքը ներկա պահին բավարար չափով բովանդակալից չէ: Օրինակ, Վրաստանի և Չիլիի համանման կազմակերպությունների կայքերում (www.investingeorgia.org/en) (www.investchile.gob.cl) ներդրողը կարող է ուսումնասիրել շատ ավելի մեծ ծավալի տեղեկատվություն, քան ՀՁՀ-ն է առաջարկում: Կայքը պետք է մշտապես հիմնված լինի ներդրողների կողմից վերջին հարցումների վրա: Գյուղատնտեսության նախարարությունում պետք է ընդունել առանձին աշխատող և նրան վերապատրաստել հատուկ ՀՁՀ-ի հետ աշխատելու համար:

   Այս համատեքստում գործակալությունը և ԳՆ-ն պետք է համատեղ սահմանեն տեղական ներդրումների լավագույն գործելակերպերը և մշակեն ներդրումային ծրագրի կատալոգ, որտեղ կներկայացվեն կոնկրետ նախագծերը, ներդրումների չափը, պոտենցիալ շուկաների վերաբերյալ հիմնական տեղեկությունները, ռիսկերը և հիմնական ֆինանսական ցուցանիշները, ինչպիսիք են տվյալ ծրագրի շահութաբերության գործակիցը և զուտ ներկա արժեքը՝ համեմատած առկա ներդրումների այլ ձևերի հետ: Այս տեղեկատվությունը պետք է առկա լինի նախարարությունում և գործակալությունում՝ տպագիր և առցանց ձևաչափերով: Հետաքրքրվողներին այս տվյալները կարելի է ավելի մանրամասնորեն ներկայացնել: Սովորաբար այս գործիքները հեռանկարային ներդրողների համար ավելի գրավիչ են, քան կոնկրետ ոլորտի առավելությունների տեսական ցուցադրումը: Ուստի, թե գործող և թե նորաստեղծ հիմնադրամը օտարերկրյա ներդրողներին պետք է առաջարկի բիզնես ծառայություններ: Այն պետք է նաև երկխոսություն նախաձեռնի բանկերի և դոնոր կազմակերպությունների միջև:

2. **Թիրախային ներդրողների սահմանումը:** Կոնկրետ երկրների և հեռանկարային ներդրողների թիրախավորումը կարող է օգտակար լինել ներդրումային քաղաքականության նախապատրաստման և իրականացման ընթացքում: Ուստի առաջարկվում է նախապատրաստել պոտենցիալ երկրների և պոտենցիալ ներդրողների ցանկ, որոնք կարող են հետաքրքրություն ցուցաբերել գյուղատնտեսության ոլորտում ներդրումներ անելու հարցում:

   Գյուղատնտեսության ոլորտում պոտենցիալ ներդրողներ կարելի է համարել Սփյուռքի տարբեր համայնքները ներկայացնող էթնիկ հայերին կամ այն պետությունները, որոնց բնակչությունն աճում է, իսկ գյուղատնտեսական ռեսուրսները սահմանափակ են: Այդ երկրները և գործարարները կարող են շահագրգռված լինել մատակարարումների հարցում եղած խզումը լրացնելու մեջ: Հայաստանը գտնվում է գյուղատնտեսության զարգացման համար սահմանափակ պոտենցիալ և ռեսուրսներ ունեցող, բայց նավթով ու գազով հարուստ արաբական մի շարք երկրներից ոչ հեռու: Այդ պետությունները կարող են հանդիսանալ գյուղատնտեսության և պարենամթերքի արտադրության ոլորտներում ներդրումների լավ աղբյուրներ: Օրինակներից մեկը գառների բուծումն է, ոլորտ, որի

հանդեպ մեծ է Իրանի և Պարսից Ծոցի այլ երկրների հետաքրքրությունը: Եթե կառավարությունը մշակի արոտավայրերի կառավարման պատշաճ ծրագիր և արոտավայրերի վարձակալման պատշաճ սխեմա, ապա դա կարող է գրավել ներդրողներին:

3. **Ներդրումային կոնկրետ ծրագրերի մշակում:** Անհրաժեշտ է մշակել ներդրումային պորտֆել հետևյալ նպատակներով. ա) ներդրումների հոսք գերակա ոլորտներում, բ) ներդրողներին շահութաբեր ներդրումների հնարավորությունների տրամադրում, գ) պետական և մասնավոր հատվածների պոտենցիալ գործընկերության զարգացում, դ) կառավարության կողմից աջակցության կոնկրետ գործիքների և մեխանիզմների սահմանում: Մենք փորձել ենք նման պորտֆել գտնել ԳՆ կայքում կամ այցելելով նախարարություն և ՀՋՀ, սակայն գտել ենք միայն մի քանի բիզնես պլաններ, ընդ որում՝ մեծամասամբ հենց բիզնես ոլորտի կամ միջազգային զարգացման կազմակերպությունների կողմից մշակված: Թեպետ նշված նախագծերը նույն ձևաչափի մեջ չեն, բայց կարող են լրացնել այս աշխատանքները: ՀՋՀ-ն պետք է սերտորեն աշխատի ԳՆ-ի հետ՝ իրատեսական նախագծերի մի քանի պորտֆելներ նախանշելու և մշակելու ուղղությամբ, որոնք, խիստ ցանկալի է, որ ունենան շահութաբերության բարձր հատուցադրույք: Ներդրողների մեծ մասին հետաքրքրում են ամենաարագ հատույց և բարձր շահութաբերություն ապահովող, ինչպես նաև կառավարության աջակցությունը վայելող նախագծերը, ընդ որում կառավարության աջակցությունը կարող է ունենալ բազմաթիվ ձևեր, սկսած որոշակի երաշխիքներից ընդհուպ մինչև համաֆինանսավորումը: Ուստի նախագծերը պետք է լինեն ավելի շահութաբեր, քան պարզապես ֆինանսական պորտֆելի զուտ հատույցը: Անհրաժեշտ է մշակել նաև ռիսկերի նվազեցման ռազմավարություն:

4. **Պարբերաբար թարմացվող հողային բանկի ստեղծում և հողի շուկայի խթանում:** Հողի շուկան և հողի առկայությունը կարևորագույն հարցերից են, որոնց բախվում են ներդրողները, մասնավորապես՝ նրանք, ում անհրաժեշտ են ավելի ընդարձակ հողակտորներ այգիներ հիմնելու, կերի արտադրություն կազմակերպելու և այլ նպատակներով: Բանն այն է, որ համապատասխան հողակտոր գտնելու նպատակով ներդրողը շատ դեպքերում հարկադրված է այցելել գյուղեր և մարզեր: Ուստի, կառավարության առաջնահերթ խնդիրը պետք է լինի տեղանքի տեղեկատվական համակարգի ստեղծումը, որը հասանելի լինի ներդրողների համար: Տեղանքի տեղեկատվական համակարգը պետք է բովանդակի պատշաճ տեղեկատվություն տվյալ տեղանքի վիճակի և հողօգտագործման պատմության վերաբերյալ: Կարելի է ավելացնել նաև տեղանքի քարտեզագրումը, ինչպես նաև հողի լավագույն օգտագործման վերաբերյալ առաջարկությունները: Տվյալների այս շտեմարանը կարող է շատ օգտակար լինել նաև այլ տեսակի ներդրողների համար, օրինակ՝ այլընտրանքային էներգիայի ոլորտում: Այս գործառույթը կարող են իրականացնել գյուղնախարարության տեղական կառույցները: Մասնավորապես, ԱՎԾ-ն վերջերս հրապարակեց գյուղատնտեսական համատարած հաշվառման վերջնական տվյալները, որոնք կարելի է օգտագործել գյուղատնտեսական ընթացիկ վիճակագրության մեջ նոր տեխնոլոգիաների կիրառման և նախարարության կողմից հողերի որակի առումով նախապատրաստական աշխատանքների կատարման համար: Նախարարությունը հայտարարել է, որ աշխատում է Համաշխարհային բանկի հետ արբանյակային վերլուծության ծրագիր սկսելու ուղղությամբ, որը վերաբերելու է հողօգտագործման և հողի առկայության խնդիրների լավագույն լուծումներ գտնելուն:

Բացի վերոնշյալից, կառավարությունը պետք է հստակ կերպով քարտեզագրի համայնքային բոլոր հողերը և որոշարկի օտարերկրացի ներդրողներին հողի վարձատվության կամ տեղացի ներդրողներին վաճառելու ճկուն մեխանիզմ: Հողի գրանցման հետ կապված խնդիրը հաղթահարելու համար կառավարությունը կարող է դիմել երկարաժամկետ վարձակալության, որով կարելի է խթանել ներդրումները: Այն կարող է պաշտպանել վարձատուի սեփականության իրավունքները, իսկ վարձակալին զրկել վարձակալության հիմունքներով տիրապետելու իրավունքից՝ դրանով իսկ ապահովելով վարձակալության ժամկետի ավարտին հողի ավտոմատ վերադարձը

սեփականատիրոջը: Հողային բանկին և ռեգիստրին զուգահեռ, համանման աշխատանքներ պետք է իրականացնել չօգտագործված սեփականության համար (օրինակ՝ արտադրական շինություններ, հին գործարաններ և այլն):

Հողօգտագործումը խթանելու համար անհրաժեշտ է ընդունել պրոգրեսիվ հարկման գործելակերպը: Բացի այդ, պետք է մշակել հողի շուկայի մեխանիզմը, ընդ որում կառավարությունը կարող է դիտարկել գյուղական համայնքներում բրոքերային ծառայության ստեղծման հարցը կամ ստեղծել այն՝ գործընթացն արագացնելու նկատառումով: Այդ ծառայությունները կարելի է նաև պատվիրակել ոլորտում գործող պետական կառույցներին, ինչպիսիք են գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնները, որոնցում պետք է համապատասխան աշխատակազմ հավաքագրել և վերապատրաստել: Բազմաթիվ ներդրողների գլխավորապես մտահոգում են հողի շուկայի անարդյունավետությունը, ընդարձակ հողակտորներ գտնելու դժվարությունը և հողի սեփականատերերին գտնելու դժվարությունը:

Ի վերջո, հողի շուկայի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար կառավարությունը պետք է որոշակիորեն խթանի համապատասխան ընթացակարգերը, կրճատի կամ վերացնի հողի ձեռք բերման կամ վարձակալության հետ կապված վճարումները և երաշխավորի սեփականության իրավունքները:

5. **Ներդրումներ գյուղի և գյուղատնտեսության հիմնական ենթակառուցվածքներում:** Ավելորդ է նշել, որ արտադրական կարողություններն աշխատեցնելու և ջրի հասանելիությունն ապահովելու համար ներդրողները կուզենային տեսնել այնպիսի հիմնական ենթակառուցվածքներ, ինչպիսիք են ճանապարհները և ջրամատակարարման համակարգերը: Տնտեսական զարգացման տեմպերի դանդաղեցման և կառավարության օպտիմալացման պայմաններում, երբ բազմաթիվ աշխատողներ հարկադրված կլինեն զրկվել աշխատանքից, այս ներդրումները կարող են ծառայել որպես կարճաժամկետ աշխատատեղերի ստեղծման լավ աղբյուր: Երկարաժամկետ հեռանկարում ենթակառուցվածքը կարող է ներդրումներ ներգրավել իրական տնտեսության մեջ, որը կհանգեցնի տնտեսության համապարփակ զարգացման: Ենթակառուցվածքն առհասարակ հանրային ապրանք է, որը մեծ մասամբ ապահովում է պետությունը: Պատշաճ ենթակառուցվածքների առկայությունը մեծապես կարևորում են նաև ներդրողները, ներառյալ գյուղատնտեսությամբ հետաքրքրվողները: Առավել կարևոր ենթակառուցվածքներից են ճանապարհները, ջրային պաշարների պահեստավորման և բաշխման համակարգերը և այլընտրանքային էներգիայի աղբյուրները: Մասնավորապես, ենթակառուցվածքների մեջ ներդրումներն այս պահին կարևորվում են նաև տնտեսության զարգացման խթանման տեսակետից: Ելնելով երկրի տնտեսապես թույլ զարգացածության հանգամանքից, առաջարկում ենք ոչ թե հույսը դնել նոր վարկերի վրա, այլ վերատեղաբաշխել ռեսուրսները դեպի ռազմավարական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների զարգացումը, ինչպիսիք են տուրիզմը, գյուղատնտեսությունը և այլ ոլորտներ:

6. **Մարդկային կապիտալի զարգացում:** Մարդկային կապիտալը խիստ կարևոր է տնտեսության բոլոր ճյուղերի, բայց հատկապես՝ գյուղատնտեսության համար, քանի որ գյուղատնտեսությանն առնչվող մասնագիտություններն այնքան էլ մեծ հեղինակություն չեն վայելում հասարակության մեջ, որի պատճառները բազմաթիվ են և տարբեր: Սակայն ավանդական գյուղատնտեսությունից դեպի տեխնոլոգիամետ և գիտելիքահենք գյուղատնտեսության ոլորտ փոխակերպման գործում խիստ կարևորվում է գիտելիքը: Կրթության նկատմամբ նվազ հետաքրքրությունը և կրթության ցածր որակը հանգեցնում են այն բանին, որ բացակայում են կամ շատ փոքրաթիվ են լավ ագրոնոմները, անասնաբույժները, պարենային անվտանգության մասնագետները և գյուղատնտեսական շատ այլ մասնագիտությունների տեր մարդիկ: Ընդ որում խնդիրներն առկա են մի շարք տարբեր մակարդակներում՝ միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում,

գյուղատնտեսական գիտասփյուռ-խորհրդատվական համակարգում: Որակյալ աշխատուժի առկայությունը ոչ միայն զարկ կտա տնտեսական զարգացմանը և կբարելավի մարդկանց կենսամակարդակը և սոցիալական պայմանները, այլ նաև կխթանի նորարարությունը: Այս առումով կարևորվում են, մասնավորապես, մասնագիտական-տեխնիկական կրթության համակարգը և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները:

Մի շարք ուսումնասիրություններ ցույց են տվել, որ կրթության մակարդակի և տնտեսական զարգացման միջև գոյություն ունի դրական հարաբերակցություն: Վերջերս լույս տեսած «Արևելյան Ասիայի զարգացումը. Հիմքեր և ռազմավարություններ» գրքում շեշտադրվում է կրթության և տնտեսական աճի միջև եղած դրական հարաբերակցությունը (Պերկինս, 2013): Կրթությունը և որակավորված աշխատուժի ներգրավման կարողությունը նաև ցույց են տալիս ԱՄՆ տնտեսության ուժեղ կողմը՝ կապված նորարարությունների և տեխնոլոգիական առաջընթացի հետ: Ըստ հեղինակների, ամերիկյան ղեկավարությունն անմիջականորեն կապ ունի մարդկային ռեսուրսներում արված ներդրումների մակարդակի հետ, որոնք հանգեցրին տնտեսական աճի (Աճեմօղլու և Աութոր, 2012): Ուստի, խիստ կարևոր է զարգացող երկրներին աջակցությունը հիմնական և բարձրագույն կրթության համակարգը արդիականացնելու հարցում: Հայաստանն, անշուշտ, էժան աշխատուժի երկիր չէ, հենց այդ պատճառով էլ Հայաստանը պետք է կենտրոնանա պրոֆեսիոնալիզմի վրա:

Գյուղատնտեսական գիտասփյուռ-խորհրդատվական համակարգը պետք է ստեղծել զրոյից, ընդ որում գիտասփյուռի պատշաճ որակը կարող է ներդրողների համար ապահովել մի շարք ծառայություններ: Նախ, գիտասփյուռ համակարգի մասնագետները պետք է ունենան ներդրումների գերակա ուղղությունների մասին լիարժեք գիտելիքներ և պատկերացում, որպեսզի կարողանան հստակ կերպով դրանք հասցնել պոտենցիալ ներդրողներին: Գիտասփյուռ համակարգը նաև պետք է հստակ դերակատարություն ունենա տեխնոլոգիաների և գիտելիքների փոխանցման գործում: Գիտասփյուռի մասնագետները կարող են նաև վերապատրաստվել հողային ռեգիստրի վարման և հող ձեռք բերելու հարցում ներդրողներին օժանդակելու գործում: Այս առումով ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման հարցում հիմնական խոչընդոտը ցածր աշխատավարձերն են:

7. **Ներդրումների գերեկա ոլորտների գնահատում և արտոնյալ մաքսային ռեժիմի և հարկային գործառնությունների ապահովում:** Եթե կառավարությունը ցանկանում է կենտրոնանալ ընտրված ոլորտի զարգացման վրա, ապա իր քաղաքականության նպատակը պետք է լինի տեխնոլոգիաների փոխանցմանն աջակցելը, սարքավորումների ներմուծումը՝ կամ երկարաձգված ավելացված արժեքի հարկով կամ առանց ներմուծման սակագնի կամ այլ արտոնյալ պայմաններով: Որոշ դեպքերում կառավարությունը պետք է դիտարկի նաև որոշակի ներդրանքների համար որոշակի ժամկետով արտոնյալ պայմաններ տրամադրելու հնարավորությունը՝ կախված շահութաբերության գործակցից և բիզնեսի ծախսածածկման հնարավորությունից: Պետք է պարզեցնել հարկային քաղաքականությունը:

Ներդրողի համար խնդիր է նաև մեքենասարքավորումների և արտադրության այլ միջոցների ներմուծումը ԵԱՏՄ-ից դուրս գտնվող երկրներից: Հիմնական ռիսկը կապված է արտադրական միջոցների համար սահմանված սակագների բարձր լինելու հետ: Ուստի, հիմնվելով գերակա ոլորտների վրա, Հայաստանը ԵԱՏՄ շրջանակում պետք է հասնի այդ ապրանքների վերաբերյալ արտոնյալ ռեժիմի սահմանմանը: Սա կարևոր է այն առումով, որ ներդրողներն այդ վճարումների պատճառով հարկադրված չլինեն ավելացնել ներդրումների ծախսերը:

8. **Ավելորդ թղթաբանության և ընթացակարգերի բացահայտում և վերացում:** Առհասարակ, պետք է ընդունել ավելորդ բեռը և արտերկրի ներդրողների ու պետական կառույցների միջև ավելորդ շփումները վերացնելու մոտեցում: Սա նախևառաջ նշանակում է օրենքների ու կանոնակարգերի վերանայում, սեփականության իրավունքների կիրարկում, կանխատեսելի իրավական դաշտ և աջակցող մարմիններ: Այս դեպքում գուցե անհրաժեշտ է, որ կառավարությունը ստեղծի բարեկամական միջավայր:

9. **Բնածին աղետների ռիսկերի կառավարում:** Քանի որ գյուղատնտեսության ոլորտը ամենառիսկայինն է, ճիշտ կլիներ մտածել պետական մակարդակում այդ ռիսկերը նվազագույնի հասցնելու ուղիների մասին: Հայաստանում հիմնական ռիսկերը կապված են ցրտահարության, կարկտահարության, երաշտի, ուժեղ քամիների և ջրհեղեղի հետ: Յուրաքանչյուր ռիսկ ունի իր յուրօրինակ լուծումը, ընդ որում որոշ դեպքերում լուծումը ենթադրում է մեծ ներդրումներ: Բացի այդ, կա նաև գյուղատնտեսական ապահովագրության համակարգի ներդրման հնարավորություն: Ընդհանրապես, լավագույն գործելակերպը կլինի այն բանի ապահովումը, որ ապահովագրության համար հաշվի առնվեն բոլոր այն ռիսկերը, որոնց ի հայտ գալու հավանականությունը 5 տարին մեկ է կամ ավելի ուշ: Եթե ռիսկերի ի հայտ գալու հավանականության ժամկետը 5 տարուց պակաս է, ապա ավելի լավ է ձեռնարկել պաշտպանության ֆիզիկական միջոցներ, ինչպես օրինակ՝ հակակարկտային ցանցերի տեղադրումը կամ երաշտի ռիսկի պարագայում ջրային ռեսուրսների կուտակման և կառավարման ավելի լավ գործելակերպի որդեգրումը: Կառավարությունը ներկայումս աշխատում է Գերմանական զարգացման բանկի հետ և հնարավոր է, որ 2017թ. սկսի փորձնական ծրագիր: Բացի այդ, պետք է աջակցության միջոցառումներ նախատեսել նրանց համար, ովքեր պատրաստակամ են ընդունել որևէ գործիք, որը կնվազեցնի ռիսկերը, ինչպես օրինակ՝ հակակարկտային ցանցերի տեղադրում, ազատում հարկերից ու մաքսատուրքերից:

10. **Աշխատանքային օրենսդրություն:** Պետք է փոփոխության ենթարկել նաև գործող աշխատանքային օրենսդրությունը: Առանձնակի ուշադրություն է պետք դարձնել այնպիսի միջոցառումների, որոնք կնպաստեն աշխատանքի արտադրողականության բարձրացմանը՝ զուգահեռաբար ապահովելով, որ առաջարկվող փոփոխությունները համապատասխանեն զբաղվածության և արտադրական հարաբերությունների վերաբերյալ միջազգայնորեն ընդունված սկզբունքներին ու չափորոշիչներին: Զբաղվածության ոլորտում ոչ ֆորմալ մոտեցումների առկայությունը ոչ միայն էական օգուտ կբերի Հայաստանի տնտեսությանը, այլև կնպաստի աշխատողների պաշտպանվածությանը, կբարձրացնի աշխատաշուկայի և տվյալ ապրանքային շուկայի արդյունավետությունը և արտադրողականությունը:

11. **Բաժնեմասնակցային ֆինանսավորում իրականացնելու պատրաստակամություն:** Հայաստանում բազմաթիվ ընկերություններ հիմնվում են բանկերի և վարկային կազմակերպությունների վրա, քանի որ վերջիններս են ֆինանսավորման միակ աղբյուրը՝ չհաշված սեփական դրամամիջոցները: Այդուհանդերձ, երկրում գնալով ավելի մեծ հնարավորություն է ստեղծվում բաժնեմասնակցային ֆինանսավորման զարգացման համար: Բազմաթիվ միջազգային բանկեր և զարգացման կազմակերպություններ ավելի մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ագրոբիզնեսի ոլորտում այս գործիքի կիրառման հանդեպ: Օրինակ, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD) Հայաստանում ստեղծել է բաժնեմասնակցային ֆինանսավորման մեխանիզմ, որն իրականացնում է Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը (www.freda.am): Եվրոպական ներդրումային բանկի (EIB) կազմակերպած աշխատաժողովի ժամանակ տարածաշրջանային ներկայացուցիչներն արտահայտեցին այս գործիքը գյուղատնտեսական ոլորտում կիրառելու՝ EIB-ի հետաքրքրվածությունը: Սակայն նախքան այս գործիքը գյուղատնտեսության ոլորտում լայնորեն կիրառելը կան լուծման կարոտ մի շարք հարցեր: Հիմնական

խնդիրներից են՝ կորպորատիվ կառավարման մշակույթի բացակայությունը, բազմաթիվ ընկերությունների կողմից բաժնեմասնակցային ներդրողներին իրենց կազմակերպության կառավարմանը, հաշվապահությանն ու ֆինանսներին հաղորդակից դարձնելուց խուսափելը և վերջապես բարձրորակ արտաքին աուդիտ անցկացնելու մեջ առանձնապես շահագրգռված չլինելը: Սովորաբար գլխավոր հաշվապահը ստանձնում է գլխավոր ֆինանսական կառավարչի դերը, ըստ այդմ ֆինանսական կառավարչի գործառույթն իրականացվում է ցածր մակարդակով:

Ներդրողների համար նպաստավոր միջավայր ստեղծելու և գյուղատնտեսական արտադրության ոլորտում ներդրումներ կատարելու հարցում նրանց շահագրգռելու համար ընկերությունները պետք է բարելավեն կորպորատիվ կառավարումը և լիարժեք կերպով հասկանան ու կիրառեն լավագույն ֆինանսական գործելակերպերը: Բայց գլխավոր հարց է մնում նաև որակյալ ֆինանսական մենեջերների պատրաստումը և բիզնես դպրոցների ու վերապատրաստման կենտրոնների առկայությունը: Միաժամանակ, կառավարությունը պետք բացառի ընկերություններում կրկնակի հաշվապահություն վարելու գործելակերպը և այնպես անի, որ նրանք չվախենան օտարերկրյա ընկերություններին կազմակերպության կառավարման գործընթացին լիովին ներգրավելուց: Սա խիստ կարևոր է այն առումով, որ այդ ընկերությունները կարող են կարևորագույն դերակատարություն ունենալ կազմակերպությունների կառավարման բարելավման գործում:

12. **Օրենսդրություն և միջազգային պայմանագրեր:** Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանն ունի նպաստավոր ներդրումային միջավայր, կառավարությունը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ բազմաթիվ այլ պետություններ պայքարում են ներդրողների պաշտպանության և վերջիններիս ավելի արտոնյալ պայմաններ տրամադրելու համար: Այս համատեքստում առաջարկում ենք միանալ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Միջազգային ներդրումների հռչակագրին: ՏՀԶԿ բազմազգ ձեռնարկությունների ուղեցույցը (ՏՀԶԿ ուղեցույց), որը ՏՀԶԿ Միջազգային ներդրումների և բազմազգ ձեռնարկությունների հռչակագրի մաս է կազմում, բովանդակում է առաջարկություններ պատասխանատու բիզնեսի վարման վերաբերյալ, որն իրականացվում է կառավարությունների և վերջիններիս ընդդատության շրջանակում կամ նրանց անունից գործող բիզնեսների կապակցման միջոցով: Ուղեցույցում շարադրված են լավագույն բիզնես գործելակերպերի հետ կապված բոլոր հիմնական ոլորտներում անհրաժեշտ սկզբունքները և չափորոշիչները, ներառյալ տեղեկատվության բացահայտումը, մարդու իրավունքները, զբաղվածության և արտադրական հարաբերությունները, միջավայրը, կաշառակերությունը և կոռուպցիան, սպառողների շահերը, գիտությունը և տեխնոլոգիան, մրցակցությունը և հարկումը: Գյուղատնտեսության ոլորտում օտարերկրյա ուղղակի ներդրումների համար լրացուցիչ խոչընդոտ են հանդիսանում անորոշությունը և դատական գործընթացների ժամկետները, որոնք, ըստ հարցազրույցների և Դուինգ բիզնես և Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի վիճակագրական տվյալների, համարվում են կոռուպցիոն ամենամեծ ռիսկեր պարունակող ոլորտներից:

Ներդրումների վերաբերյալ պայմանագրերը քաղաքականության մեկ այլ ոլորտ է, որը կարող է նպաստել ներդրումային կայուն միջավայրի ստեղծմանը թե գործող և թե նոր ներդրողների համար: Որոշակի իմաստով Հայաստանի ընտրելիք տարբերակները խիստ սահմանափակ են, քանի որ երկկողմ համաձայնագրերի ստորագրումը կախված է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների հետ փոխադարձ համաձայնության վերաբերյալ համապատասխան կետից: Հայաստանի համար առաջին արժեքավոր քայլը կարող է լինել հետևել Ներդրողների հետ պայմանագրերի թափանցիկության ապահովման – պետական արբիտրաժի վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիային: Փաստաթուղթը օգտակար տեղեկություններ է բովանդակում Հայաստանի կնքած միջազգային ներդրումային պայմանագրերի գործողության ժամկետների մասին, որով կարելի է տեղեկանալ պայմանագրային գործընկերների հետ փոխգործողությունների ժամանակացույցի մասին:

Վերջապես, Հայաստանի՝ ռազմավարական ներդրումների համար պատասխանատու նորաստեղծ մարմինը կարող է ծառայել որպես արժեքավոր գործիք հարցերի լայն շրջանակի վերաբերյալ քաղաքականության համաձայնեցման համար, որոնք ազդում են ներդրումային միջավայրի որակի վրա, ներառյալ, օրինակ, աշխատանքային հարաբերությունները և կորպորատիվ կառավարումը, որոնց առումով, ըստ Գլոբալ մրցունակության զեկույցի, Հայաստանն ունի հարաբերականորեն ցածր միավորներ: Ներդրումները խթանող վստահելի մարմինը պետք է ունենա երկիր մտնող ներդրումների որակը ձևավորելու պոտենցիալ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Abdih, Y., and L. Medina. (2013). Measuring the Informal Economy in the Caucasus and Central Asia. IMF Working Paper No. 13/137
2. Acemoglu; Autor (2012). “What Does Human Capital Do?” A Review of Goldin and Katz’s The Race between Education and Technology
3. Armenpress (2016), “Hayastani Iravazorutyun” Foundation is to make Armenian attractive to foreign investors.
4. Armenpress (2016), We are substituting the word “optimization” with “drastic cuts”.
5. Bertelsmann Stiftung’s Transformation Index (2016), Armenia
6. Development Foundation of Armenia (2016), Invest in Armenia
7. Dwight Perkins (2013), East Asian Development: Foundations and Strategies
8. Economic Freedom Index (2016), Armenia
9. Eurasian Economic Union (2016), General Information
10. GeoStat (2016), Statistics on Foreign Investments
11. Grant Thornton Armenia (2016), (Doing business in Armenia
12. Heritage Foundation (2016), Economic Freedom Index
13. Invest in Georgia, Georgian Investment Agency (2016)
14. Lutz Goedde, Maya Horii, and Sunil Sanghvi (2015), “Pursuing the global opportunity in food and agribusiness”, McKinsey Quarterly
15. Maarten Elferink; Florian Schierhorn (2016), Global Demand for Food Is Rising. Can We Meet It? Harvard Business Review
16. Martin Ford (2016), Rise of the robots: technology and the threat of a jobless
17. Ministry of Economic Development and Investments (2016), Investment Statistics
18. Ministry of Economic Development and Investments (2016), Investment Policy
19. National Statistics Service of Armenia (2016), Main Statistical Data
20. National Statistics Service of RA (2014), Main Finding of Agricultural Census in Armenia
21. OECD Declaration on International Investment and Multinational Enterprises; 1958 Convention on the Recognition and Enforcement of Foreign Arbitral Awards (New York Convention) in 1960 and the 1965 Convention on the Settlement of Investment Disputes between States and Nationals of Other States (ICSID).
22. Shimon Peres (1999), Nobel Lecture. Nobelprize.org. Nobel Media AB 2014
23. State Register of Legal Entities (2016), Data
24. The Law on the State Budget (2017), Agriculture
25. The World Bank (2016), Data, Main Economic Indicators
26. The World Bank (2016), Doing Business 2017
27. Transparency International (2015), Corruption Perception Index
28. US Department of State Bureau of Economic and Business Affairs (2016), Investment Climate Statements for Armenia
29. US Department of State Office of Investment Affairs, Investment Climate Statement: Armenia – Labor, 2016. https://www.export.gov/apex/article2?id=Armenia-labor
30. Yerkir (2016). A new law on foreign investments is being designed.
31. www.freda.am
32. Путин (2015). Совещание по вопросам развития сельского хозяйства

Պատրաստվեց ICARE հիմնադրամի կողմից

Շվեյցարիայի համագործակցության Հարավային կովկասի գրասենյակի աջակցությամբ

INTERNATIONAL CENTER FOR AGRIBUSINESS RESEARCH AND EDUCATION

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

Սույն փաստաթուղթը արտահայտում է ICARE-ի փորձագետների տեսակետները: Գործընկեր կազմակերպությունները պատասխանատու չեն ուսումնասիրության բովանդակության համար: